



ԷՏԿԱՐ ՆԱՀԻՆ

ՇԻՆՈՒԵԼՈՒ ՎՐԱՅ ԵՂՈՂ ՏՈՒՆ

(Ֆրանսիական «NOVEMBRE» վեպի փորագրանկարներից)

ՄԵՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

Էսկար Շահին, որ աւելի քան երեսուն տարի է ի վեր գեղարուեստական միջազգային թատերաբեմին վրայ առաջնակարգ դէմք մը դարձած է, կը շարունակէ՝ անխոնջ կենսունակութեամբ մը՝ իր տեղը գործական շրջի վաստակը:

Ան իր սկզբնաւորութիւնն ըրաւ 1896ին: Այդ թուականին, մենք ի՛նչ ունէինք մարդկութեան ցոյց տալիք իբր գեղարուեստական մեծ արժէք. Ադամեան ու Զախաճեան վախճանած էին, Պալեան գերդաստանէն ոչ ոք կը մնար հախարդներուն գործը շարունակող. Կոմիտաս վարդապետ ու Տիրան Ալեքսանեան դեռ չէին յայտնուած: Ունէինք միայն Այվազովսքին ու Զաքարեանը, առաջինը՝ հանճարի փայլանքներով բովանդակի մեծ ծովանկարիչ, որուն գործը սակայն շատ քիչ գնահատուած է Ռուսաստանէն դուրս, երկրորդը՝ նախկին մօրթի սքանչելի վարպետ մը, Փարիզի մէջ խորապէս յարգուած՝ իբր Շարաշի արժանաւոր յաջորդ մը: Անկից ի վեր, ահաւոր աղէտներ խաժեցին մեր ժողովուրդին վրայ, բայց — երբեք պիտի չգաղըրիմ այս սրտապնդիչ իրողութիւնը մասնանիշ ընելէ — մեր բզրատուած ազգին ծոցէն ելաւ ամբողջ բոյլ մը արուեստագէտներու որ յաջողեցան մրցիլ եւրոպական մեծագոյն ազգերու արուեստագէտներուն հետ և իրենց ինչպէս և իրենց ազգին անունը փառքով պատկեցին: Փարիզի պէս տիեզերական կեդրոնի մը մէջ, ոչ մէկ փոքր ժողովուրդ (մանաւանդ Արեւելքէն) ունի այսօր այնքան փայլուն գեղարուեստական տաղանդ:



Էսկար Շահին

Ներու հոյլ մը, ինչքան հայ ժողովուրդը: Էսկար Շահին առաջին հշանը տուողներէն մին եղաւ մեր ցեղին ծոցէն բղտող արուեստագիտական հզօր վերընձիւղման մը երեւոյթին: Ան Պոլսոյ Գաղափարէն եկած վեներտիկ, յետոյ Փարիզ, Տրիասի, Թուրուզ-Լօթրեքի, Սթենլենի ճամբուն մէջ՝ արտագրեց գործ մը իր անճնական կնիքով խորապէս գրոշմուած, իր տեղողութեան և

ճաշակին համաձայն արտայայտեց փարիզի բնահեղինները, բարբերը, տիպարները ընդարձակ շարքի մը մէջ փորագրանկարներու սրտնցմէ ամանք անմահ հրաշակերտներ կը մնան, այս երկրին մեծագոյն քննադատներուն կարծիքով՝ ինքնայատուկ և անկորուստ էջ մը աւելցուց ֆրանսական հոր արուեստի պատմութեան: Հեղինակաւոր գրողներու կողմէ իր գործին նուիրուած ֆրանսերէն ու եւրոպական այլ լեզուներով ուսումնասիրութիւնները թանկագին հատոր մը կընան կազմել, որ կոթող մըն է ի պատիւ հայ տաղանդին: Անաթոլ Ժրանս մը և Օքթավ Միրայո մը իրեն գիմեցին իրենց մէկ գործը պատկերազարդել տալու համար, ու մինչև ցարգ ան կը շարունակէ իր գործը ճոխացնել նորանոր արտագրութիւններով: Երկու տարի առաջ ան Պարէսի La Mort de Veniseին պատկերազարդումը կը կատարէր շարքով մը հայակապ փառանքներու որ բոլոր գեղատէրներուն զմայլանք պատճառեցին, և քանի մը ամիս առաջ լոյս տեսաւ Ֆլուպերի պատանեկան տարիքին գրած մէկ վրդովիչ վէպը (ցարգ անտիպ մնացած), Novembre, զարգարուած Շաշինի նկարներով, ուր վարպետը կը վերերեւայ իր ուժի ու շնորհի յատկութիւններով: Ուրախ ենք որ կրնանք այս թիւին մէջ արտատպել Novembre վէպի այդ նկարներէն մէկ քանին:

•••

Նոր արուեստագէտներուն մէջ որ վերջերս յայտնուեցան, ամենէն ուշագրաւն է Գրիգոր Շիլթեան, առողջ տաղանդ մը հարազատ նկարչի: Նոր Նախիջեւանէն եկած այդ երիտասարդը, Իտալիոյ մէջ իր գեղարուեստական կրթութիւնն ստացած, արդէն գնահատուած գէմք մը դարձած է փարիզի և Պրիւսէլի մէջ: Իր հզօր վերձինը, իր կեանքի ուղղակի տեսիլն ու արուարտայայտութիւնը, իր ի ծնէ նկարչի հուժկու ձիրքերը, իրականութենէ ներշնչուած իր արտիկէտ ու ժուժկալ արուեստը արդէն իր անունը ծանօթ ու սիրելի դարձուցած

են միջազգային գեղարուեստաւոր հասարակութեան: Պրիւսէլի տղային մուտքներ իր գործերէն մին գնեց տարի մը առաջ՝ այդ քաղաքին մէջ «Անի» ընկերութեան սարքած ցուցահանդէսի միջոցին, և երկու ամիս առաջ Փարիզի մէջ իր առաջին անձնական ցուցահանդէսին, որուն յայտագրին յառաջաբանը գրած էր յայտնի քննադատ Արսէն Ալէքսանտր, իր խաղական տիպար-



Գրիգոր Շիլթեան


ները, ինչպէս և փարիզեան տեսարաններն ու Լաբիւր-մօրքները, իրենց ուժեղ գծագրութեամբ, գոյներու կենդանութեամբ, արտայայտութեանը հակամարտութեամբ խոր ազաւորութիւն գործեցին իրազեկ աչքեւունքուն վերայ: Լիւքսանուրի պետական թանգարանի վարչութիւնը գնեց իր կարեւոր նկարներէն մին, և ահա ինչ որ այդ ամիս գրեցին փարիզեան թերթերը.

L'Œuvre.— Շիլթեան, որուն խորհուրդ տուած էինք շատ անձնատուր չլլալ իր գծագրիչի ձիրքերուն եւ հմուտ բմբռնումին շարագրական գիտութեան, որ նիւթին հրապոյրներուն և գոյնի նուրբ աննշխարանց վրայ յամենալն իրեն արհամարհել կուտային, կը թուի մեզ լսած ըլլալ և աշուհեանուող անդուտ գեղութեանը նուիրուիլ սրտած: Այս զարմանալի նկարիչը մէկ տարուան մէջ ահագին յառաջգիւլութիւն քած է: Երբ յաջողի իր մեծ նկարներուն առ հեշտական հմայումի ահ զօրութիւնը որ արդէն իսկ կը փառալօծէ իր փոքրիկ Լաբիւր-մօրքները, ոչ մէկ առարկութիւն պիտի ունենանք զինքը տեսնելու իր բուն տեղը, այն շարքին մէջ ուր կը փայլին Լընէները, Ժէ-ոիքօ, Մանէ եւ Տրուն:

Comœdia.— Ցուցահանդէսը զոր Գրի-

գոր Շիլթեան սարքած է Ռենէսանսի սրահին մէջ, լաւագոյն կերպով ցոյց կուտայ քան ինչ որ կրնային ընել այդ նկարչին Աշնան Սալօնին եւ Թիւիլըրի Սալօնին զրկած նկարները, իր խառնուածքին ուժգնութիւնը: Կիրաւիսքը, որուն վերարտադրութիւնը կը հրատարակենք, բաւական ընտրու գաղափար մը կուտայ այդ ամուր,

կամագոր նկարչութեան վրայ, ուր հաստատ կը զգացուի յարգանքը կառուցուածքի մը որ անողոք տրամաբանութեամբ մը եւ «սիլթմ»ի հաւասարակշռութեան, գծերու եւ ծաւալներու ներդաշնակութեան տարահամ ըմբռնումով մը յորինուած է: Երբեմն, չափազանց կը զգացուի նկարչին կամքը՝ իր առաջադրած այդ նպատակին



Գ.Ր. ՇԻԼԹԵԱՆ.— Կիրառահար

հասնելու. բոլոր բարեբաղդաբար ան հարստանորոտած է նկարչի ձիրքերով որ կ'ագեւորեն ինչ որ կայ քիչ մը շատ սխառման իր նկարներէն ամանց մէջ: Կայ իրողութիւն մը որ անհերքելի կը մնայ. Գրիգոր Շիլթեան նկարիչ մըն է որ այս ցուցահանգէտով մեզ կը առիպէ

զինքը նկատողութեան տանել: Ըլլայ մեծ սրտակերներու մէջ, ինչպէս այն որ սփռակերի սնակի մը շուրջ կը խմբէ ուրախագէժ անձնաւորութիւններ, ըլլայ ուղղակի գիտողութեան աւտորաններու մէջ, ինչպէս ձկնափաճառուհին կամ սրտափաճառուհին, ուր ամէն ինչ կատար-

եալ ինքնավստահութեամբ մը շարադրուած ներդաշնակութեան մը կ'աջակցի, որոշ կ'երեւայ թէ Գրիգոր Շիլթեան արուեստագէտ մըն է զոր պէտք է հաշուի առնել: Ան կրնայ շատ հեռուն երթալ, եւ իր նորագոյն պատկերները, որ միւսներէն աւելի «նկարիչ»ի պատկերներ են, թոյլ կուտան իր վրայ մեծ յայտեր գնել, մանաւանդ ներկայ ցուցահանդէսով իր տուած թանկագին գրուականէն յետոյ:»

Figaroի մէջ, Արսէն Ալեքսանտր կը գրէ. «Ռեյնէսանսի կալըրիին մէջ ունեցանք երրեակ ցուցահանդէս մը զոր կազմած են արուեստագէտներ որ ամենէն ինքնատիւներէն են զոր օտար գաղտնիքներ մեզի յայտնած ըլլան վերջերս: Մին Հայագգի



Գ. Շիլթեան. — Հումեակա՛ն հաւառն



Գ. Շիլթեան. — Նարիւր-նոր
(Հաւաքածոյ Հ. Լըզլօի, Պրիսէլ)

Շիլթեանն է, որմէ արդէն մեր աչքին զարկած էին բարբի պատկերներ եւ բնական մեծութեամբ ժողովրդական տիպարներ՝ ամենայնոց նկարագրով, աղջահեկան էջերուն ալժմ՝ աւելցուցած է տարկաներու նկարներ բոլորովին ինքնայատուկ ընդթով:»

La Renaissance de l'Art հանդէսին մէջ, դարձեալ Արսէն Ալեքսանտր կը գրէ. «... Շիլթեան զգացումն ունի արտայայտութեան, աւելի կեցուածքին քան օարժման: Ասկից յառաջ կուգայ տեսակ մը խստութիւն իր գործագրութեան մէջ, ինչ որ կուտարեւալէս արամաբանական է: Կը տեսնուի որ կը զգուշանայ իր ձիւրքերէն չափազանց օգտուելէ, եւ թէ զանոնք կը գտայ: Ուտի իր գործը, ներկայիս, կամքի ճիգ մըն է: Հաւանական է որ օր մը իր մէջ, բուն իսկ շարժումը իր գերակշռու-



Օրիորդ Ալիս Գավուհեան

Թիւնը սկիտի ստանայ կեցուածքին վրայ: Երկու փուլերը հաւատարապէս շահեկան սկիտի ուլլան: Ամէն պարագայի մէջ, այս նկարչին մարդկային արժէքը մեծապէս նշանաւոր է, եւ ոչ ոք անգգայ սկիտի մնայ իր շատ հետաքրքրական եւ անձնադրոշմ նախընտրանքներուն հանդէպ:»

* * *

Փարիզեան հայ արուեստագէտներու հոյլը ճոխացաւ վերջերս նաեւ կանխահաս զմայլելի տաղանդով մը, որ է երկրորդաւորակ հայ արուեստի Ալիս Գավուհեանը: Տրամադրանքի այս աղջնակը, որ հայկական

երեկոյթներու մէջ արդէն ուշագրութիւն գրաւած էր իր արտակարգ ընդունակութեանց ապացուցումով, եւ զոր Փրէսպրե-ժինսքիի և Քիշինսքիի պէս մեծանուն ուսուցարուհիներ հաճոյքով իրենց աշակերտներու դասուն մէջ ընդունած են, իր առաջին պարտիան բեմի վրայ տուաւ անցեալ յունիսին՝ Սալ ա'իէնայի մէջ, և միջազգային ընտիր հասարակութեան վրայ որ եկած էր զինք տեսնել՝ այն տաղաւորութիւնը թողուց թէ իր մէջ ապագայ հայ Փավլովա մըն է որ կը ծագի: Իր մարմնոյ զարմանալի գիւրաթեքութիւնը, բիթմի բնածին զգացումը, բեմի վրայ մէջ արդէն իսկ

ստացած մեծ հմտութիւնը, ժեռութեամբ, կեցուածքներու և միմիւրի շնորհը կամ չարածիւթիւնը, աղշեցուցին ու հմայեցին հանդիսականները որ անվերջ օվտօն մը ըրին և իր իւրաքանչիւր պարը կրկնել տուին: Ահա ինչ որ իր մասին գրեցին փարիզեան թերթերը.

Le Courrier.— «Շատ գեղատիւ պարուհի մը (12 տարեկան), Օր. Ալիս Գալուսքեան, երէկ իրիկուն պարի բեմի վրայ մը տուաւ Սալ տ'իէնայի մէջ: Շատ սիրունիկ, շատ շնորհալի, արդէն իսկ նշանաւոր քեմիսի մը տիրացած, այս փոքրիկ արուեստագիտուհին մեծ յաջողութիւն մը ունեցաւ իր հայկական, սղանիական և գաղական պարերով: Ամէն ինչ յուսով կուտայ որ քանի մը տարիէն իր անունը հռչակաւոր պիտի գտնայ:»

New York Herald.— «Պարի բեմի վրայ զոր Ալիս Գալուսքեան տուաւ Սալ տ'իէնայի մէջ, անասման յաջողութիւն գտաւ: Այդ գեղատիւ արուեստագիտուհին տառերիւ տարեկան է միայն. նուաստի պարին, հայկական և սղանիական պարերուն


մէջ, ան բոլոր խոստումները կուտայ փայլուն աղագայի մը որ իր արուեստագետի ասպարէզին առջեւ կը պարզուի:»

Les Coulisses du Spectacle.— «Պրպուկի պարուհին՝ Օր. Ալիս Գալուսքեան, մեղի աղացուցուց, Սալ տ'իէնայի մէջ, կանխահմտութիւնն իր իր տաղանդին որ աղահամարէս սլիսի համնի իր լիակատար փթիթման: Այդ խելացի աղջնակին մէջ գտական ասպի մը խմորը կայ:

«Ան արդէն իսկ պարերն աւելի կամ նուազ կշռականօրէն չափանկելով չի շատանար, այլ կը թարգմանէ զանոնք, աւանդ մէջ սրամտութիւն կը դնէ, թերեւս նոյն իսկ իր տարիքին համար չափազանց նըրբին: Ամենայաջող կերպով ան մօտեցաւ բոլոր տեսակի պարերուն, գաղական, հին ու նոր: Իր նուաստի պարը փոքրիկ քերթուած մըն էր հիւմուրի, ինչպէս և վալէնսիական. տառնց մէջ կը հաւասարի լաւագոյն ձիկան պարուհիներուն: Իր յաջողութիւնը յաղթական եղաւ:»

Ա. Զ.





ԼՏԳԱՐ ՆԱԶԻՆ

ԱՃՊԱՐԱՐՆԵՐ

Ֆիլսոֆի «NOVEMBRE» վեպին փորագրանկարներէն